ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԾՀԾՁԲ-15/25/1/1-49-2017

ք. Երևան «23» 01 2017 թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հայկ Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից,միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բջջային հեռախոսային կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին» չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված բնութագրին և ժամկետներին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.3 սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

3.3.1 հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

3.3.2 Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 (երկու) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա բջջային հեռախոսային Ծառայության ընդհանուր գինը կազմում է տվյալ բյուջետային տարվա ֆինանսական միջոցների հատկացված գումարի չափով: Ընդ որում բջջային հեռախոսային բաժանորդավճարի Ծառայության ընդհանուր գինը 2017թ.-ի համար կազմում է 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, 2018թ.-ի համար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ և 2019թ.-ի համար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության դիմաց պատվիրատուն վճարում է 100 բջջային հեռախոսահամարի համար,որի ամսական գումարը կազմում է 2500 ՀՀ դրամ, Հավելված N 1-ում ներկայացված սակագներով ձևավորված բոպեավճարի ընդհանուր գումարը՝ համաձայն Կատարողի ներկայացված հաշիվ-ապրանքագրերի:

4.1.1 Սույն Պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի վճարման պարտավորությունները 2017-2019 թվականների համար կստանձնվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի համաձայնագիր:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում՝ (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագիր կնքելով:

7.2 Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե պայմանագրի կատարման համար համապատասխան իրավական ակտով ֆինանսական միջոցները չեն նախատեսվել

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.6 Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.9 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011059251
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ-02586282

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան, Գ.Լուսավորիչ 9
«Էյչ-Էս-Բի-Սիբանկ Հայաստան»ՓԲԸ

Հ/Հ 217001264993001

ՀՎՀՀ 00024873

Կորպորատիվ վաճառքի բաժնի
ղեկավար՝

Կ.Ասատուրյան

(ստորագրություն)

Հավելված 1
2017թ. ---------- --- -ին կնքված
N գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Ծառայության անվանումը	Չափի միավորը	Ծառայության նկարագրությունը
1	Բջջային հեռախոսային ծառայություններ	դրամ	Բջջային հեռախոսակապի տրամադրում (հեռախոսային սարքով) մինչև 100 համարների համար: • Ամսավճարը մեկ հեռախոսահամարի համար 25 ՀՀ դրամ • Ելքային զանգեր փակ խմբերի անդամների միջև 0 ՀՀ դրամ Լրացուցիչ ծառայությունները մեկ րոպեի համար ներկայացվում են • Զանգեր ցանցի ներսում 10 ՀՀ դրամ • Զանգեր դեպի այլ տեղական բջջային ցանցեր (ներառյալ ԼՂԽ)-10 ՀՀ դրամ/րոպե • Զանգեր Հայաստանի ֆիկսված ցանցեր – 10 ՀՀ դրամ/րոպե • SMS ցանցի ներսում- 10 ՀՀ դրամ • SMS դեպի այլ տեղական բջջային ցանցեր – 10 ՀՀ դրամ • Միջազգային SMS -20 ՀՀ դրամ • Շարժական ինտերնետ 2G, 3G- 10 ՀՀ դրամ/1ՄԲ • Ռոմինգ եվրոպական երկրների համար 250 • Միջազգային զանգեր Ռուսաստան, Եվրոպա, ԱՄՆ

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Հունվար	*2019թ Դեկտեմբեր*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059251
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ-02586282

Աշխատակազմի ղեկավարի՝

Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-ՍիԲանկ Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217001264993001

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

Կ.Ասատուրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<< >> ----------2017 թ. կնքված
N ---------- գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 900011059251
Հ/Հ 900011059186
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02586282

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ ք.
Երևան, Սայաթ-Նովա 40/1
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-ՍիԲանկ Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217001264993001

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ----------
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման
հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով
նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով
ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								
2								

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 2.1
<<_____>> _____ 2017 թ. կնքված
N գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. ------- -ին կնքված N ---------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1-52-2018
N ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/1/1-49-2017
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան 23 01 *2018թ.*

ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ--ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1 Հիմք ընդունելով 23.01.2017թ.-ին «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ կնքված ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/1/1-49-2017 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1 և 7.1 կետերի դրույթները՝ Պայմանագրի Կողմերը համաձայնեցին Պայմանագրում կատարել հետևյալ լրացումը.

1.1.1 Պայմանագրի 4.1 կետի «2018 թվականի 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումար» բառերը փոխարինել «2018 թվականի 1 107 500 (միլիոն հարյուր յոթ հազար հինգհարյուր) ՀՀ դրամ գումար» բառերով:

1.1.2 Պայմանագիրը լրացնել նոր N 3 հավելվածով ՝ Վճարման ժամանակացույցով, համաձայն հավելվածի:

1.1.3 Պայմանագրում, «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց», և «Հանձնման-Ընդունման արձանագրություն» հավելվածներում ««ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն » , Հ/Հ 900011059186 և Հ/Հ 900011059251 » բառերը փոխարինել « «ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն» , Հ/Հ 900011018505» բառերով.

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը և հավելվածները ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածները Պայմանագրի անբաժանելի մասն է:

2.3 Սույն համաձայնագրում չնշված պարտավորությունները Պայմանագրում թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կնքված է, հայերենով է, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ք.Երևան, Աբովյան 9 Հ/Հ 900011018505 ՀՎՀՀ 02586282 Աշխատակազմի ղեկավար՝ ----------Վ.Էլոյան	«Յուքոմ» ՍՊԸ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9 «Ամերիաբանկ»ՓԲԸ Հ/Հ 1570043102134100 ՀՎՀՀ 00024873 Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ ----------Կ.Ասատուրյան

№ ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/1/1-49-2017 2018 թ. հունվարի 23-ին կնքված գնման պայմանագրի Հավելված № 3

N 1-52-2018

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աճող. Հազ. ՀՀ դրամ

Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը		Ընդամենը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝											
			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
N			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3 = (4:15)	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Բջջային հեռախոսային ծառայություններ	1107.5	221.5	221.5	221.5	498.4	498.4	498.4	775.3	775.3	775.3	1107.5	1107.5	1107.5
	Ընդամենը	1107.5	221.5	221.5	221.5	498.4	498.4	498.4	775.3	775.3	775.3	1107.5	1107.5	1107.5

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք.Երևան, Աբովյան 9

ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011018505

ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՍՊԸ

ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9

«Ամերիաբանկ»ՓԲԸ

Հ/Հ 1570043102134100

ՀՎՀՀ 00024873

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

---------- Կ.Ասատուրյան

(ստորագրություն)

Կ. Տ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի հունվարի 31-ի N 03/26-1/1542-18 գրության՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը կատարել է գնումների պլանի փոփոխություն՝ «հանրային հեռախոսային ծառայություններ»- Մեկ անձ և «բջջային հեռախոսների ծառայություններ»- Մեկ անձ գնման ձևերը փոխվել են «հանրային հեռախոսային ծառայություններ»- Շրջանակային համաձայնագիր և «բջջային հեռախոսների ծառայություններ»- Շրջանակային համաձայնագիր գնման ձևերով, այդ իսկ պատճառով ՀՀ ֆինանսների նախարարություն 7-օրյա ժամկետում ներկայացվող պայմանագրի հաշվետվության ժամկետը չի պահպանվել: Խնդրում եմ հաշվառել «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ կնքված ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/1/1-49-2017 և համ. 52-2018 և ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/1/1-48-2017 և համ. 51-2018 պայմանագրերը:

Հավաստիցնում եմ, որ փոփոխությունները չեն հանգեցնում գնումների մասնակիցների շահերի ոտնահարմանը:

Բյուջետային ֆինանսավորման և ծրագրերի համակարգման վարչության պետ՝

Ա. Թադևոսյան